

М. РАФИЛИ, Ахундов, под общей редакцией Дж. Джафарова, Москва, 1959, 192 стр., цена 4 р. 50 к.

Մ. ԲԱՖԻԼԻ, Ախունդով, ընդհանուր խմբագրությամբ Զ. Զաֆարովի, Մոսկվա, 1959, 192 էջ, գինը 4 ռ. 50 կ.:

Մ. Բաֆիլիի այս գիրքը, որ հրատարակվել է «Մեծ մարդկանց կյանքը» սերիայով և նպատակ ունի ընթերցող լայն հասարակայնությանը ծանոթացնել ադրբեջանական մեծ լուսավորիչ-դեմոկրատ Միրզա Ֆաթալի Ախունդովի կյանքին ու գործունեությանը, անկասկած, արժանի է ամենայն ուշադրության և դրվատանքի:

Գրքի հեղինակը ադրբեջանական գրականագետ, հանգուցյալ պրոֆեսոր Միրախլ Հասան Եզլի Բաֆիլին երկար տարիների ընթացքում զբաղվել է ադրբեջանական գրականության պատմության հարցերով, մասնավորապես, Մ. Ֆ. Ախունդովի կյանքով ու գրական-հրատարակախոսական գործունեությամբ: Նրա առաջին մեծածավալ աշխատությունը նշանավոր լուսավորչի մասին հրատարակվել է 20 տարի առաջ: Դրանից հետո այդ նույն թեմայով Բաֆիլին հրատարակել է մի շարք արժեքավոր հոդվածներ: 1957 թվականին լույս տեսավ նրա «Մ. Ֆ. Ախունդով» լուրջ մենագրությունը:

Այսպիսով, գրախոսվող գիրքը, որ տարիների աշխատանքի արդյունք է, կարծես թե ընդհանրացնում և ի մի է բերում հեղինակի բոլոր ուսումնասիրությունները Ախունդովի մասին:

Միրզա Ֆաթալի Ախունդովը (1812—1878) հսկայական դեր է խաղացել ադրբեջանական ժողովրդի կուլտուրական և հասարակական-քաղաքական կյանքում: «Ախունդովի կյանքն ու գործունեությունը — իրավացիորեն գրում է Բաֆիլին,— համակված են եղել Ադրբեջանի և Արևելքի ժողովուրդներին լուսավորելու, նրանց՝ ազատությունից, սովից, տգիտությունից ազատելու, իրենց երջանկության ու ազատության համար պայքարելու ոգին նրանց մեջ զարթեցնելու ազնիվ ձգտումով»:

Համարձակ ու մարտական ոգով է հանդես եկել Ախունդովը ֆեոդալիզմի և նրա գաղափարախոսության, խաների ու շահերի բռնակալության ու ճնշման դեմ, անողորմ կերպով մերկացրել է իսլամի «հոգևոր հայլըրին», անխոնջ կերպով պայքարել կնոջ ազատագրման և նոր այբուբեն ստեղծելու համար: Նրա լուսավորչական գործունեությունը, որ ամբողջովին նվիրված է եղել ժողովրդական մասսաների շահերը պաշտպանելու գործին, խոր ազդեցություն է թողել ոչ միայն ադրբեջանական ժողովրդի, այլև Մերձավոր ու Միջին Արևելքի բազմաթիվ այլ ժողովուրդների նոր, առաջավոր գրականության ցարգացման վրա: Ախունդովը ժողովուրդների

բարեկամության վեճ գաղափարի դրոշակակիրներից մեկն է եղել: Նա բազմիցս նշել է, որ Անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների բախտը սերտորեն կապված է ռուս ժողովրդի բախտի հետ:

Ախունդովը իր մանկությունն ու պատանեկությունը անց է կացրել Նուխիում, Գանձակում և Հարավային Ադրբեջանում, համարյա միշտ խանական ծանր ճնշման ու կամայականության մթնոլորտում, ծայր աստիճան աղքատ ու հետամնաց ժողովրդի շրջանում: Ապագա գրողը մանկության հասակում ցանկություն ուներ մոլլա դառնալ: Սակայն հետագայում ադրբեջանական նշանավոր պոետ Միրզա Շաֆի Վաղեխիի ազդեցությամբ ու խորհրդով նա հրաժարվում է այդ մտադրությունից և սկսում է սովորել ռուսերեն լեզուն: 1834 թվականին Ախունդովը տեղափոխվում է Թիֆլիս և ընդունվում Կովկասի գլխավոր կառավարիչ բարոն Ռոզենի քաղաքացիական գրասենյակը՝ թարգմանչի պաշտոնով:

Աշխատելով Կովկասի այն ժամանակվա ամենիստրատիվ կենտրոնում, Ախունդովը հնարավորություն է ստանում բազմակողմանիորեն ծանոթանալու ռուս ժողովրդի կյանքի ու կուլտուրայի հետ: Ախունդովին ոգեշնչում էին մասնավորապես ռուս առաջադեմ գրողներն ու հրապարակախոսները, ռուս մեծ դեմոկրատ-ռեուլյուցիոներները: Նրանց ազդեցության տակ է, որ ձևավորվում է Ախունդովի լուսավորչական աշխարհայացքը: Ախունդովին լավ ծանոթ էին նաև ադրբեջանական գրականության ու մշակույթի դեմոկրատական տրագիցիաները: Նրա վրա գաղափարական մեծ ազդեցություն է ունեցել մասնավորապես ադրբեջանական ականավոր գրող ու գիտնական Արասկուլի Բարիխանովը, որն անձամբ ծանոթ է եղել Ա. Ս. Պուշկինի, Ա. Ս. Գրիբոյեդովի և Կովկաս արսորված բազմաթիվ ղեկաբերիստների հետ:

Մ. Ֆ. Ախունդովն ունեցել է ընկերների ու բարեկամների լայն շրջան, որոնց թվում են եղել Ա. Ծավճավաձեն, Ն. Բարաթաշվիլին, Յա. Պ. Պոլոնսկին, Ի. Ի. Կլեմենտև և ուրիշներ: 1837 թվականի սկզբներին Թիֆլիս է գալիս Կովկաս արսորված հայտնի ղեկաբերիստ, ռուս ականավոր գրող ու հրապարակախոս Ա. Բեստուժև-Մարլինսկին: Շուտով նրա և ադրբեջանական լուսավորչի միջև հաստատվում են ջերմ ընկերական հարաբերություններ: Հայտնի է, որի-

նակ, որ Մարինսկին ազրերջաներեն լեզվի դասեր է վերցրել Ախունդովից և ֆարսերենից ուսերեն է թարգմանել (ավելի ճիշտ խմբագրել) նրա հանրահայտ էլեգիան՝ գրված Ա. Ս. Պուշկինի ողբերգական մահվան կապակցությամբ շիմբ կա ննթագրելու, որ Ախունդովը ծանոթ է եղել նաև Մ. Յու. Լերմոնտովի հետ, որը Վրաստան էր եկել 1837 թվականին:

Ախունդովի մոտիկ բարեկամներից է եղել հայ մեծ գրող ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: 1837 թվականից մինչև 1840 թվականը Աբովյանն ու Ախունդովը միասին աշխատել են Քիֆիսի գավառական ուսումնարանում՝ առաջինը, որպես տեսչի պաշտոնակատար, երկրորդը, որպես ազրերջաներեն լեզվի դասատու: Նրանք երկուսն էլ անձնվիրաբար պայքարել են հարազատ ժողովուրդների առաջադիմության ու երջանկության համար, համարձակորեն հանդես են եկել ազգային ու սոցիալական ճնշման դեմ, սուր կերպով մերկացրել են ունակցիան, կծու ծաղրել տգիտությունը: Նրանց ջրմ բարեկամությունը խարսխված էր ընդհանուր գաղափարների ու ձգտումների վրա: Մեծ լուսավորիչ-դեմոկրատները հայ և ազրերջանական ժողովուրդների, Անդրկովկասի ու Ռուսաստանի բոլոր ժողովուրդների եղբայրական բարեկամության քառագույններ են եղել:

Ավելորդ չէ այստեղ հիշել, որ Մ. Յ. Ախունդովի բարեկամների թվումն է գտնվել նաև Կոնստանդնուպոլսի պարսկական դեսպանատան խորհրդական, ձագուժով հայ, Մալբում-խանը, որին նա ընտելացրել է որպես սեանվանի արևելաբան ու գրող: Մալբում-խանը Ախունդովին ուղղած իր նամակներից մեկում, բարձր գնահատելով մուսուլմանական այրուրենի նրա նոր նախագիծը, գրել է. «Քանի որ Դուք Արևելյան երկրներում հանդիսանում եք Արևելքի խաղաղության առաջին մարտիկը, ապա ես կամենում եմ, նախ և առաջ, ողջունել Ձեզ այս նոր շրիֆտի միջոցով: Ես կարող եմ Ձեր ստեղծագործությունը մեծագույն հաճությամբ Ձեր աշխատությունները, Ձեր ճաշակն ու Ձեր գիտելիքները հիանալի են. ամեն որ, ով գերադասում է թուրքական (այսինքն ազրերջանական)՝ Մ.) ազգի բարոյությունը իր սեփական բարոյությունից և գիտական խիղախման միջոցով հարված է հասցնում տգիտության հղորդյանը, նա արժանի է ամեն տեսակ հարգանքի ու մեծարանքի...»:

Բաֆիլիի գրքում լուսարանված է Մ. Յ. Ախունդովի հարուստ ու բազմակրթմանի գրական գործունեությունը սյուրիան, պրոզան, թատերգությունը, փիլիսոփայական ու հրապարակախոսական ստեղծագործությունները. նիշու է նկատում գրքի հեղինակը. որ Ախունդովը

հանդես է եկել ինչպես ազրերջանական ժողովրդի, այնպես էլ շատ ուրիշ մահմեդական ժողովուրդների գեղարվեստական գրականության զարգացման համար նոր ուղիներ հարթող նորարարի դերում:

Մեծ լուսավորիչը ժխտելով «արվեստը արվեստի համար» սկզբունքը, գտնում էր, որ գրողը պետք է բարձրացնի ժամանակի հրատապ հարցերը, հանդես գա տգիտության ու հարստահաման դեմ, նա պարտավոր է մասսաների մեջ արթնացնել բարձր գաղափարներ և ամեն կերպ աջակցել ժողովրդի կուլտուրայի և լուսավորության զարգացմանը:

Ախունդովը հանդիսանում է ազրերջանական դրամատուրգիայի հիմնադիրը: Նրա ունախտական կատակերգությունները, որոնց մեծ մասը թարգմանված է ռուսերեն, ֆարսերեն և այլ լեզուներով, անողորմաբար մերկացնում ու ծաղրում են հարստահարողներին, պորտաբույծներին, տղետ. ֆանատիկոս, բմահաճ, կեղծավոր ու ժողովրդին խարող մարդկանց: «Ախունդովի ծիծաղը,— գրում է Բաֆիլին,— կծու ու սպանիչ էր: Բայց այն, ինչ նա նկարագրում էր, շատ էր հեռու ծիծաղելի լինելուց: Ֆանատիզմը, սնահավատությունը, հետամնացությունը կարող էին միայն արցունքներ առաջացնել իր ժողովրդին անսահմանորեն նվիրված, իր ժողովրդի լուսավոր ու երջանիկ օրերի մասին երազող մարդու աչքերում: Բայց Ախունդովը ոչ միայն երազում, այլև գործում էր, պայքարում, սիրում ու առում: Երգապատող կյանքի նկատմամբ նրա ստեղծության մեջ անսահման սեր կար իր հույսալից ժողովրդի հանդեպ, ցանկություն ունենալու այն ամենը, ինչ որ խանգարում է նրա առաջադիմությանն ու ազատությանը: Բուկ ծիծաղը պայքարի հոգը միջոց էր Ախունդովը ցույց է տալիս շրջապատող կյանքի դաժանությունն ու հետամնացությունը: Նա վերցնում էր օխավարի թագավորության րոզը, օգնում էր հասկանալու, որ ֆեոդալական իրականության պայմաններում ծնունդ առած սարսափելի այլալակությունների ու հակասությունների հետագա գոյությունը անհնար է»:

Մ. Յ. Ախունդովը մեծ մտածող էր: Նա կարդացել է Թեոֆիլակու, Կերցենի, Չերնիշևսկու. Դորբույրովի բազմաթիվ աշխատություններ, ծանոթ է եղել Վոլտերի, Մոնտեսքյուի, Սպինոզայի, Բուրի, Նյուտոնի և ուրիշների ստեղծագործություններին: Նրա աշխարհայացքը ձևավորվել է ռուս առաջադեմ հասարակական մտքի ազդեցության տակ: Փիլիսոփայական հիմնական հարցի լուծման խնդրում նա կանգնած էր մատերիալիզմի դիրքերում և այդ դիրքերից էլ բացատրում էր կյանքի ծագումն ու զարգացումը, չնայած հասարակական կյանքի լուսա-

բանման հարցերում նա շկարողացավ հեռանալ իդեալիզմից: Ախունդովը պրոպագանդում էր աթեիզմը, վճռականորեն պայքարում կրոնական խավարամտության դեմ: Խոսելով մեծ գրողի մատերիալիստական ու աթեիստական աշխատությունների նշանակության մասին Րաֆիլին գրում է. «Ախունդովը Մերձավոր Արևելքի ժողովուրդների առաջին մտածողներից մեկն է եղել, որը կարողացել է հասկանալ մուսուլմանական կրոնի իսկական դերը՝ որպես ֆեոդալական դասակարգի հենարանի, որպես ժողովրդի հոգեկան ստրկացման միջոցի: Նա խորապես գիտակցել է, որ ազատագրման ուղին պահանջում է ոչ միայն ֆեոդալական հասարակարգի հիմքի խորտակում, այլև կրոնի հեղինակության ոչնչացում: Աթեիզմի և մատերիալիզմի պրոպագանդան դարձավ ժողովրդական մասսաների գործի, նրանց՝ դարավոր ստրկությունից ազատելու համար պայքարի հզոր զենք: Ախունդովի պատմական պայքարը ֆեոդալական բռնապետության դեմ անբախտելիորեն կապված էր ֆանատիզմի, ֆեոդալական գաղափարախոսության դեմ մղվող պայքարի հետ, հանուն մատերիալիստական ուսմունքի»:

Ախունդովը երկարատև ու համառ ջանքեր է թափել արաբական այրուրենի բարենորոգման համար: Մեծ լուսավորիչը գտնում էր, որ այդ բարդ, դժվարամարս այբուբենը արգելակ էր հանդիսանում մուսուլմանական ժողովուրդների մեջ գրագիտություն և լուսավորություն տարածելու գործում: Հարկավոր էր փոփոխել, հեշտացնել այն, և Ախունդովը ոգևորությամբ գործի է անցնում: Թուսական և մի բանի լատինական տառեր հիմք ընդունելով նա ստեղծում է նոր այբուբեն: Սակայն, շնայած Ախունդովի բազմաթիվ դիմումներին և մեծ ջանքերին, ցարական շինովներին և Իրանի ու Թուրքիայի կառավարող շրջանները արհամարհում և մերժում են նորարարի առաջարկը: Այս անհաջողության մասին Ախունդովը իր «Նոր այբուբենի մասին» բանաստեղծության մեջ տխրությամբ գրում էր. «Աշխարհը հավիտենական չէ և իմ կյանքը վշտի ու անձկության մեջ գնում է դեպ իր մայրամուտը: Հայրենիքի սերը ինձ մղել է ազնիվ գործերի: Եւայց իմ բոլոր ջանքերը ապարդյուն մնացին: Դարն իմ ևս դատապարտում եմ. չկու մեկը, որը սիրտ ունենա»:

Ախունդովը ռուսական կողմնորոշման ջերմ կողմնակիցն էր: Նա երբեք կասկածի տակ չի առել այն, որ ազրբեջանական ժողովուրդը սնտեսական և կուլտուրական մեծ առաջադիմության ու ազատության կարող է հասնել միմիայն ռուս ժողովրդի հետ սերտ առնչության և բարեկամության առկայության պայմաններում: Ազրբեջանի միացումը Թուսաստանին նա մեծ

առաջադիմական ակտ էր համարում և վճռականորեն դատապարտում բոլոր այն ռեակցիոն գործիչներին, որոնք իրենց հայացքն ուղղել էին դեպի Թուրքիա և Իրան: Բնորոշ է, որ Ղրիմի պատերազմի ժամանակ (1853—1856) Ախունդովը մտավ ռուսական բանակ, բաջարար մարտնչեց թուրք փաշաների գործերի և նրանց անդլո-ֆրանսիական տերերի դեմ: Մեծ հայրենասերը հպարտանում էր այն բանով, որ ռուս զինվորների հետ միասին Թուրքիայի դեմ պատերազմել են նրա հայրենակիցներից շատերը՝ ազրբեջանցիներ, հայեր, վրացիներ: Ախունդովը բարձր էր գնահատում ռուսական կուլտուրան և ռուսերեն լեզուն: «Ես լավ գիտեմ ռուսերեն լեզուն, — գրում է նա: — Մեր դարում ռուսերեն լեզուն անգերազանցելի է գրականության և առհասարակ այլ բնագավառներում»:

Մ. Ֆ. Ախունդովը շատ հետևորդներ ու համախոհներ ուներ ինչպես Ազրբեջանում, այնպես էլ Թուրքիայում, Իրանում, Հնդկաստանում ու Եգիպտոսում: Նա խորը հետքեր է թողել ոչ միայն Ազրբեջանի, այլև մուսուլմանական շատ ուրիշ երկրների կուլտուրական և հասարակական-բազարական կյանքում: Խոսելով Ախունդովի ազդեցության մասին Իրանում, Րաֆիլին գրում է. «Պետք է նկատել, որ Ախունդովի ազդեցությունը Իրանի վրա արտակարգ մեծ է եղել: Նրա գրական ստեղծագործությունները և փիլիսոփայական նամակները, որոնք տասնյակ ձևազիր օրինակներով տարածված են եղել ամբողջ Իրանում, աջակցել են իրանական ինտելիգենցիայի դեմոկրատական հայացքների ձևավորմանը, մեծ դեր են խաղացել իրանական բուրժուա-դեմոկրատական ռեվոլյուցիայի նախապատրաստման գործում: Ախունդովի գեղարվեստական ստեղծագործությունները ամենինից առաջ թարգմանվել են ֆարսերեն: Նրանք օգնել են իրանական շատ գրողների զարգացնելու իրենց ռեալիստական ոճը: Ախունդովի կատակերգությունները բնագաղափարական ռեալիզմի հիմքը դրեցին Իրանում: Միրզա Մալում-խանը Ախունդովի գաղափարական աչքի ընկնող հետևորդներից մեկն էր»:

Ախունդովի երկերի մի զգալի մասը արդեն լույս է տեսել ռուսերեն և սովետական Միության շատ ժողովուրդների լեզուներով: Նրա ստեղծագործությունները սիրով կարդում են ոչ միայն Ազրբեջանում, այլև Հայաստանում, Վրաստանում, Սովետական Միության բոլոր ծայրերում:

Րաֆիլիի գիրքը ամփոփ և բավարար պատկերացում է տալիս ազրբեջանական ականավոր գրող-լուսավորչի մասին: Այն, որ գրված է ջերմությամբ ու պատկերավոր ոճով, կարգացվում է մեծ հետաքրքրությամբ: Ն. ՄԿՐՏՉՅԱՆ